ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ ԼԻՆՈՒՄ ԵՆ ԺԱՄԱՆԱԿԱՎԵՐ

Հեռավոր 2017 թվին եղանակը բավականին տաք էր, այդ պատճառով քաղաքի ամենամտերիմ ընկերուհիներին իսկ ավելի կոնկրետ Մանէին, Նարեին ու Սոֆիին շատ հաճախ էր կարելի տեսնել դրսում միասին խաղալիս։

Նրանց բոլորը գիտեին, որպես անբաժան ընկերուհիներ։

Սակայն 2021-ին դպրոցում նրանք գժտվում են մեկ անհասկանալի պատճառով։ Մեկը մյուսին նախանձեց։

Հիմա ավելի մանրամասնորեն...նրանցից յուրաքանչյուրն ուներ առանձնահատկություն։ Օրինակ Մանէն- շատ խելացի էր

Սոֆին-չափից դուրս կազմակերպված

Իսկ Նարեն աչքի էր ընկնում իր լավ հումորով։

Օրերից մի օր դպրոց գալիս է հայտարարություն, ուսուցիչը դասարանի առջեւ բացում է այն եւ սկսում բարձրաձայն կարդալ.

-դպրոցում անցկացվելու է ինտելեկտուալ մրցույթ, լավագույն միավորները ստացողներին կտանեն կրթության նախարարություն։

Մանէի աչքերը փայլեցին «ես հաստատ կկարողանամ ընդգծվել բարձր միավորներովս» մտածեց նա իսկ հետո հարցրեց երեխեքին.

-Բացի ինձնից գոնե մեկնումեկ կմասնակցի?

Շատերն ուզում էին մասնակցել այդ թվում նաեւ Նարեն ու Սոֆին

Մանեն մտածեց «ինչի հույսով են նրանք մասնակցում, պարզ չէ՞ որ ես եմ հաղթելու...»

Բայց փորձելով դա ցույց չտալ պարզապես շարունակեց սովորականի պես շփվել Նարեի ու Սոֆիի հետ։ Սակայն Նարեն ու Սբֆին էլ հետ չմնացին եւ մրցույթից առաջ ցանկացան խոչընդոտել Մանէի հաղթանակին, սակայն մշակված պլանը չստացվեց։

Ինտելեկտուալ մրցույթն ավարտվելուն պես բոլորը տեսան հաղթողին եւ ստացվեց այնպես, ինչպես սպասվում էր։ Ամենալավը գրեց Մանէն։ Զարմանալի կլինի ասել, բայց երկար տարիներ միասին անցած ճանապարհով հանդերձ ե՛ւ Նարեի ե՛ւ Սոֆիի աչքերում նախանձի կայծ հայտնվեց։

Մի կես տարի էլ այդպես անցավ. Դպրոցի հիմնական զրույցի թեման հենց Մանէն էր եւ նրա սրամիտ կերպարը։

Սակայն դասարանում մեծ դեր էր խաղում նաեւ Նարեն։ Եթե Սոֆիի կամ Մանէի հումորներից չէին ծիծաղում կամ նույնիսկ անտեսում էին, ապա երբ Նարեն էր ծիծաղելի բան ասում, դասարանը բառի ուղիղ իմաստով մարում էր ծիծաղից, նույնիսկ ուսուցիչը չէր ջղայնանում. Ավելին ասեմ. Նա բոլորից շատ էր ծիծաղում։

«Ապարանցին պաղպաղակը ձեռքին մտնում է եկեղեցի: Տեր հայրը ժամ է մատուցում՝ — Հալելուա, ալելուա, ալելուա… Ապարանցին՝ — Որ չկռռաս, չի հալի, հանգիստ կանգնի՛ր։»

Նման հումորների շնորհիվ Նարեն 7ա-ի «քայլող անեկդոտ» մականունն էր ստացել։ Ինչը շա՛տ քիչ մարդիկ են ստանում։ Սոֆին եւ Մանէն նույնպես ուզում էին ուշադրության կենտրոնում լինել նման պահերին։ Բայց Նարեի հումորն անցնող դեռ չէր եղել եւ չէր էլ պատրաստվում լիներ։

Մի օր երբ դասարանը սովորականի պես լսում էր Նարեի հումորը դասարան մտավ նախարարությունը ներկայացնող մեկը, եւ ասաց

-Բարեւ ձեզ։ Ինձանից ներկայացնում եմ Ռոզա Մխիթարյան եւ ուզում եմ զգուշացնել, որ քաղաքի դպրոցների միջեւ մրցույթ է ընթանում։ «Ո՞վ է ավելի կազմակերպված» վերնագրով։ Կանոնները հեշտ են, բայց տաղանդով մեկը պետք է ներկայացնի ձեր դպրոցը։ Պետք է պարզապես կազմակերպել լավագույն միջոցառումը, հաղթող դպրոցը կպարգեւատրվի։ Ձեւանից մեկը կհամարձակվի՞ ներկայացնել ձեր դպրոցը։

Ամբողջ դասարանը բացի Նարեոց ու Մանէից ծափահարելով ասում էին.

-Սո-ֆի, Սո-ֆի!!

Սոֆին այդ պահին ձեւացրեց, որ կարմրեց ու ամաչեց, սակայն նա էլ գիտեր որ դպրոցի միակ հույսը նա կլինի։ Նարեն ու Մանէն ընդհակառակը ծուռ-ծուռ նայում էին Սոֆիին։ Շատ երկար չպատմեմ, դպրոցի հպարտությունը դարձավ Սոֆին։ Քանի որ մրցույթին հաղթահարողը եղավ նա։

Մի օր 7ա-ի դասղեկն ասում է

-վաղվա համար պատրաստում ենք խմբային աշխատանք «ընկերասիրություն» թեմայով։ Յուրաքանչյուր խմբում լինելու է 3 հոգի։

-Էլի խմբային?!?! Ընկեր Արշակյան դուք ինքներդ չհոգնեցիք այսքան խմբային հանձնարարելուց?...

Ասում է Մանէն, սակայն Սոֆին պատասխանում է.

-Տպավորություն է մենք շատ ենք ուզում խմբով աշխատել Մանէն ջան։

Խիստ ու կռվարար տոնով ասում է Մանեն, բայց Մանեին էլ պատասխան է գտնում Նարեն

-ուֆ, բոլորիս մոտ նույն իրավիճակն է, մի կռվեք ու մի գանգատվեք ամեն ինչից, զզվեցի արդեն։ Մեկին խմբայինը դուր չի գալիս, մյուսին մեկ ուրիշ բան։

Այնպես է ստացվում որ հենց Նարեն Մանէն ու Սոֆին նույն խումբ են ընկնում։ Դասերը ավարտվելուն պես Նարեն ծռմռելով դեմքը ի վերջո կանչում է Սոֆիին ու Մանէին իր տուն խմբայինին պատրաստվելու համար։

-հրավիրում եմ ձեզ իմ տուն, որպեսզի խմբայինին պատրաստվենք։ Իմացեք, որ ես չէի ուզում ինձ մայրիկս ստիպեց դա ասեի

-Այնպես չի, թե մենք քո տուն գալու դարդն էինք լացում-ասաց Սոֆին

-Բառերդ չափավորիր, թե չէ կարող է միամիտ խմբայինից 2 ստանանք-ասում է Նարեն, նա ուզում էր շարունակել խոսքը սակայն Մանեն նրան ընդհատեց

-վայ, կգանք-կգանք։

-Դե ուրեմն գնացինք-ասաց Նարեն

Մանեն ու Սոֆին լուռ հետեւեցին Նարեին

Երեխաները հասան տուն եւ Նարեի մայրիկը նրանց դիմավորելուց հետո ասաց

-լավ եք երեխեք ջան? Վաղուց չէի տեսել Ձեզ

-շատ լավ, դուք ինչպես եք?

Հարցրեց Մանեն

-լավ-լավ Մանե ջան.

-հուսով եմ ձեզ չենք խանգարի։

Ասաց Սոֆին

-չէ-չէ, չասես այդպես բաներ Սոֆ ջան։

երեխեքը մտան Նարեի սենյակ եւ Նարեի դեմքի արտահայտությունից նրանք ակնկալեցին որ հյուրասիրություն չի լինելու։ Սակայն Նարեի դուռը թակելով նրա մայրիկը ներս է մտնում եւ լայն ժպիտով ու լի հոգատարությամբ լցված ասում է

-երեխեք ջան, ինչ կցանկանայիք?

Մանէն եւ Սոֆին կարմրեցին եւ ասացին, որ եկել են պարզապես խմբայինին պատրաստվելու համար եւ ոչինչ չէին ուզի։ Նարեյի մայրիկը նկատելով,որ Մանէն և Սոֆին ամաչեցին,ուղղակի գնաց։ Բայց քիչ անց նորից վերադարձավ,բայց այս անգամ մրգերով և ասաց.

- Երեխաներ հյուրասիրվեք։

Մանէն և Սոֆին ասացին

-Շնորհակալություն։

Եվ հետո Նարեի մայրիկը գնաց։

Հաջորդ օրը նրանք երեքով փորձ անելով գնում էին դպրոց։

Եվ երբ արդեն հասնում էին դպրոցի մուտքին Սոֆին ասում է

- երեխեք սպասեք,ես ձեզ բան ունեմ ասելու։Խնդրում եմ նորմալ կասեք,որ տասը ստանանք, լա՞վ

։ Սոֆին

ասում դա շատ լուրջ դեմքով։

Մանէն ասում է կողքից

- Այո,այո նորմալ կասենք։ Մենակ թե դու լավ ասես ։

Սոֆին Մանէին պատասխան է գտնում և մինչ ուզում է ասել դա, նրան ընդհատում է Սոֆին և ասում.

- երեխեք մինչև դուք այստեղ լեզվակռիվ եք անում դասը արդեն սկսվում է , եկեք արագ գնանք,որպեսզի չուշանանք։

-ճիշտ ես,առաջին անգամ համաձայն եմ քո հետ գնացին-ասում է Մանէն զզվանք արտահայտող դեմքով։

Նրանք շտապում են դասի և հազիվ են հասցնում։Դասատուն մտնում է դասարան և տեսնում է,որ երեխաները լուռ նստած կրկնում են դասը։ Նա շատ է զարմանում,որ ոչ մի խոսքել չի կարողանում գտնել,5 րոպե հետո նոր ասում է

-առաջին խումբ եկեք ներկայացնելու արագ։

Առաջին խումբը վերջացնում է և երկրորդ խումբն է գալիս նրանք էլ են վերջացնում և գալիս են նրանք՝ Մանէն,Նարեն և Սոֆին...

(Փոնովայա մուզիկա՝ դդդդմ,դդդդմ...)

Նրանք պատմում են,պատասխանում են հարցերին և նստում են։

Դասատուն ասում է

- Ապրեք բոլորդ,բոլորդ էլ 10 եք ստանում։

Երեխաները շատ են ուրախանում։

Աղջիկներն էլ այնքան են ուրախանում,որ չեն նկատում և իրար գրկում են։

Հետո զզվանքով տեսնում են այդ և իրար հետ են հրում։

Բայց էլի ուրախանում են և ուրախ ուրախ գնում են տներով։

Գնալով տուն Սոֆիին իր մայրիկը ողջունում է, եւ հափշտապ ասում.

-Սոֆ, կարծում եմ իմացած կլինես որ շատ վաղ ժամանակներից Նարեի եւ Մանէի մայրիկների հետ ընկերություն եմ արել։

-Հա, ինչի՞... -հարցնում է Սոֆին։

-Հետները սրճարան եմ գնալու, հետս կուզես գալ? Իմ կարծիքով Նարեն եւ Մանէն էլ այնտեղ կլինեն.

-ոչ, դա բացառված է։ Մենք վիճել ենք, եւ շատ լավ ենք արել։ Դա իմ կյանքի լավագույն որոշումս էր...

-զարմանալի է.. լավ, չեմ մտնի ձեր կռվի մեջ։

Նույն խոսակցությունը եղել էր Նարեի եւ Մանէի մոտ։

Հաջորդ օրը մայրիկները սրճարան գնացին եւ բոքորն էլ պատմեցին երեխեքի կռվի մասին։

«ես նրա հետ կյանքում չե բարիշի», «կարծես պրոբլեմներս քչացան այն ժամանակվանից ի վեր երբ կռվել ենք», «նրանք են մեղավոր» այդպիսի արտահայտություններ էին լսել նրանց մայրիկները նախորդ երեկո։ Նրանք շատ զարմացած էին, սակայն եւ գիտեին, թե նրանց հետ ինչեր պետք է դեռ տեղի ունենան...

Արդեն ասել էի, որ Մանէն ու Սոֆին մեր դպրոցի հպարտությունն են։ Այդ պատճառով նրանց տանոգմ էին տարբեր հարցազրույցների, համերգների մի խոսքով տարբեր տեղեր։ Այդ պատճառով նրանք ստիպված էին ամեն անգամ տեսնել եւ շփվել միմյանց հետ, քանի որ բացի իրարից ոչ ոքի չգիտեին, իսկ ժամերով պարզապես նստելը-նրանց ձանձրացնում էր։ Դա նրանց մտերմացնում է, իսկ Նարեն? Նարեն առանձնացած, նոր ընկերներ գտած իր կյանքով էր ապրում..

Մի օր դպրոց գնալիս Նարեի ոտքի տակ քարտեզ է ընկնում, նա ոտքով տշում է այն բայց քիչ անց նորից դեմ առ դեմ հանդիպում է քարտեզի հետ։

Նորից է այն կողմ հրում, բայց ապարդյուն քարտեզը միշտ Նարեի դիմացն է գալիս։ Նարեն նյարդայնացած վերցնում է քարտեզը եւ արդեն պատրաստվում էր թափել աղբարկղի մեջ, բայց..

Բայց նա կարդաց մի քանի բառ մինչ թափելը, եւ այնտեղ մեծ տառերով գրված էր «բաժանումները ժամանակավոր են» նախադասությունը։ Նարեն ոչինչ չհասկացավ, նա որոշեց թղթի պարունակությունը լրիվ կարդալ։ Ամենատակը գրված էր «ուզում ես հաղթել? Ունեցիր կազմակերպվածություն, խելք եւ հումոր» Նարեն նորից ոչինչ չհասկացավ։ Նա վերընթերցեց այդ ամենը-եւ ինչ շոկի մեջ էր Նարեի շոկը երբ նա հասկացավ գրվածի իմաստը։ Նա ոտքերը կտրած վազեց դեպի Մանէն ու Սոֆին։ Առանց բան ասելու նա քարտեզը տալիս է երեխեքի ձեռքը.

-արագ կարդացեք!

Սակայն Սոֆին աչքերը ֆռցնելով ասում է.

-գնա հա..!

-ուֆ, Նարե եթե ուզում ես մեր հետ շփվել-սա վատ տարբերակ է։-ասում է Մանեն

-ես լուրջ եմ ասում!! Լավ, թող մոտներդ մսա հետո կկարդաք..

Մանեն ու Սոֆին իհարկե անտարբեր չանցան քարտեզի կողքով: Մի քանի օր անդադար գլուխ պահելով չէին կարդում, բայց ահա.. նրանք որոշեցին կարդալ:

Նրանք միասին կարդացին և հասկացան, որ ամեն դեպքում Նարեին պետք է օգնություն: Մանէն ու Սոֆին շատ էին մտածում այդ քարտեզի մասին, «օգնենք?, թե չօգնենք?», «թափենք? Թե պահենք?» նման հարցերը չէին լքում նրանց:

Նրանք մյուս օրը գիտակցելով այդ ամենը մոտեցան Նարեին: Առավոտ շուտ էր, երբ Նարեն տխուր կանգնած էր այդ ժամանակ և երբ նրան մոտեցան Մանէն և Սոֆին, Նարեն իր ներսում զգաց անհանգստություն, համ էլ ուրախություն.

-Նարե, մենք կարդացինք քո տված քարտեզը և հասկացանք, որ քեզ օգնություն է պետք մեր կողմից:-ասում է Մանէն

-Մենք պատրաստ ենք քեզ օգնել Նարե, չնայած մեր կռվին:-շարունակում է Սոֆին

Նարեն շատ ուրախացավ և նրանք համախմբված մտածում էին այդ ամենի մասին մինչև զանգը տալը:

Զանգը տվեց և նրանք վազեցին դասարան, բայց ապահովության համար նրանք ոչ ոքու ցույց չէին տալիս իրենց համախմբվածությունը, որպեսզի հանգիստ կարողանայն օգնել միմիանց:

Դասերը վերջանալու պես նրանք հավաքվեցին Սոֆիենց տանը և սկսեցին մի գեղեցիկ ՖԼԵՇ ՄՈԲ պատրաստել, որպեսզի իրենք հաղթեն: Նրանք մի գիշերվա ընթացքում ամբողջն արեցին, մեկը մեկին լրացնելով, մեկը մյուսին օգնելով նրանք հասան իրենց նպատակին:

Համաձայն քարտեզի կանոններին նրանք հենց այդպիսի մի ֆլեշմոբ պետք է պատրաստեին:

Ապրիլի 26ն էր, նրանց ՖԼԵՇ ՄՈԲԸ ներկայացնելու օրը: Նրանք, կարելի է ասել, որ ընդհանրապես լարված չէին, քանի որ քաջ գիտակցում ու վերհիշում էին, թե ինչ ջանք ու եռանդ էին թափել այդ ՖԼԵՇ ՄՈԲԻ վրա:

Նրանք վերջապես բարձրացան բեմ: Նրանք իդեալական հանձնեցին գործնական աշխատանքը և գրավեցին №1 տեղը: Նրանք ավելի վերապնդեցին նրանց ընկերությունը և սկսեցին ավելի մտերմիկ ընկերություն անել միասին:

Պարզվեց, քարտեզ ուղարկողն էլ չէր ուզում վատություն անել երեխեքին, նա պարզապես ուզում էր ամրացնել այն ընկերությունը, որը շատ անկեղծ էր.. վերջում էլ

երեխեքը վերջին անգամ ուզեցին նայել քարտեզին մինչ թափելը, զարմանալիորեն այնտեղ ոչինչ չկար ո՛չ գրված, ո՛չ էլ նկարված բացի մեկ նախադասությունից «Ախր ափսոս կլիներ այսքան տարիների ճանապարհից շեղվելը, ճիշտ չե՞մ»..

Իսկ այն ինչ կատարվել էր դրանից որոշ ժամանակ առաջ..

դրա մասին երեխեքը մոռացան եւ այլեւս չվերհիշեցին։

Մի օր երբ նրանք նորից հանդիպեցին Սոֆին դանդաղ, ասաց.

-երեխեք.. ախր քարտեզի վրա ճիշտն էր գրված~>>

Մանէ: «Բաժանումները ժամանակավոր են»

Այսպիսով-հասկացանք, որ տարիների ընկերությունը կարող է փլվել մի նախանձի պատճառով..

Բայց եթե ընկերությունը իրոք ազնիվ էր, ապա ոչինչ չի կարող խոչընդոտել դրան, լինի այն նախանձ թե փորձություն.